# ԱրՊՀ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԱՄԱՌԱՅԻՆ ՓՈՐՁՈՒՍՈՒՑՈՒՄԸ

*Հունիսի 24-ից ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետում մեկնարկել է ամառային փործուսուցումը: «Աշխարհագրություն» մասնագիտության 1-ին և 2-րդ կուրսերի առաջին օրվա փործուսուցման վայրը Հունոտի կիրճն էր, որտեղ նրանք հնարավորություն ունեցան ամրապնդելու գեոմորֆոլոգիա, երկրագիտություն և ջրաբանություն առարկաներից լսարանում ստացած գիտելիքները:*





«Փործուսուցումը հիանալի հնարավորություն է հմտանալու և որպես աշխարհագետ դրսևորվելու համար: Բաց երկնքի տակ հետաքրքիր դասընթացը և փործուսուցումը մեր ամառը դարձրին էլ ավելի հագեցած, օգտակար և հաճելի»,-ասել է «Աշխարհագրություն» մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Մարիամ Ասրյանը՝ ուսանողների անունից շնորհակալություն հայտնելով համալսարանին, դասախոսներին՝ մասնագիտական գիտելիքների և փործուսուցումն արդյունավետ կազմակերպելու համար:

Փործուսուցման ղեկավարներ Վ. Սաֆարյանի, Հ. Գրիգորյանի և Ռ. Թովմասյանի օգնությամբ ուսանողները ծանոթացան Կարկառի անտեցեդենտ հովտին, կարստային ռելիեֆի ձևերին, տեսան եզակի վոկլյուզային աղբյուր, յուրահատուկ տրավերտինային քարայր («Մամռոտ քար»), ջրաչափական աշխատանքներ կատարեցին Կարկառ գետի վրա և որոշեցին գետի ջրի ծախսը:



Ուսանողների տեսական գիտելիքներն ամրապնդելու, նրանց կատարելագործման և ուսուցման գործում կարևորելով փործուսուցման դերը՝ աշխարհագրության ամբիոնի դասախոս Ռուբինա Թովմասյանը նշում է, որ մասնագիտական փործուսուցումներն ավելի են ընդլայնում ուսանողի մտահորիզոնը և գիտելիքների պաշարը, ինչը փաստում են նաև ուսանողները:

Փործուսուցումը կտևի մինչև հուլիսի 19-ը, որի շրջանակում ուսանողները հնարավորություն կունենան լինելու Արցախի տարբեր տեսարժան վայրերում, գործարաններում:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
*Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ*
Հրատարակվում է 1994 թվականից

***Խմբագիր՝ Զարինե Սառաջյան***
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»
№ 05(219)
հունիս -հուլիս 2019

# ԱՀ ՆԱԽԱԳԱՀԸ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ԲՈՒՀԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՐՏԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ



***Հուլիսի 4-ին Արցախի Հանրապետության Նախագահի նստավայրում տեղի է ունեցել 2018-2019 ուստարում Արցախի պետական համալսարանը գերազանցությամբ ավարտած 85 շրջանավարտներին դիպլոմների հանձնման և պարգևատրման հանդիսավոր արարողությունը: ԱՀ նախագահ Բակո Սահակյանը դիպլոմների հետ միասին շրջանավարտներին հանձնել է նաև դյուրակիր համակարգիչներ, ինչպես նաև 100 հազարական դրամ:***

Նախագահը շնորհավորել է շրջանավարտներին, մաղթել նրանց հաջողություններ եւ ամենայն բարիք:

«Եղեք ուժեղ ու խիզախ ձեր հայրերի եւ պապերի պես: Նրանք կերտել ու պաշտպանել են մեր անկախությունը, դուք պետք է այն զորացնեք ու ամրապնդեք: Թող այս հաջողությունները լինեն շարունակական եւ ուղեկցեն ձեզ ձեր ամբողջ կյանքի ընթացքում»,- իր ելույթում ընդգծել է երկրի ղեկավարը:

Արարողությանը ներկա ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը ևս շնորհավորել է շրջանավարտներին:

«Մասնագիտական կրթությունը մեր երկրում թևակոխել է բարեփոխումների նոր փուլ, որը պետք է ապահովի անցումը որակական նոր մակարդակի: Դրան է միտված պետական քաղաքականության շրջանակներում իրականացվող ծրագրերը, մասնավորապես, բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը, որը մեկնարկել է նախորդ տարի՝ հնարավորություն տալով մեր բուհերին ինքնագնահատման և ինքնավերլուծության միջոցով վեր հանել առկա խնդիրները և մշակել բուհի զարգացման ռազմավարական նոր ծրագրեր»,- մասնավորապես ասել է ԿԳՍ նախարարը:

Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ Էլեոնորա Հասրաթյանն իր խոսքում շնորհակալություն է հայտնել բուհի պրոֆեսորադասախոսական կազմին՝ մասնավորապես նշելով.

«Մենք Արցախի զինվորներն ենք, և մեր գիտությունը այն ուժն է, որով պետք է կերտենք մեր երկրի խաղաղ ապագան: Մեր ձեռքբերումների համար մենք շնորհակալ ենք մեր դասախոսներին, իսկ մեր երկրի խաղաղ ապագայի համար շնորհակալ ենք մեր հարազատներին: Թո՛ղ խաղաղությամբ բացվի Արցախ աշխարհի ամեն մի առավոտը, և մենք՝ գիտության զինվորյալներս, կերտենք մեր երկրի առողջ ապագան»:

Իրավագիտության ֆակուլտետի շրջանավարտ Նորա Գարաքյանն իր ելույթում շնորհակալություն է հայտնել երկրի նախագահին՝ նշելով, որ գերազանցության դիպլոմը երկրի նախագահի ձեռքից ստանալն անչափ պատվաբեր և պարտավորեցնող է:

«Դեռևս 2015 թվականին ընդունվելով ԱրՊՀ՝ ես անգամ չէի կարող պատկերացնել, որ մայր բուհը կավարտեմ գերազանցության դիպլոմով և կարժանանամ այն անձամբ ԱՀ նախագահի ձեռքից ստանալու պատվին: Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում Բակո Սահակյանին՝ նախագահական նստավայրում ընդունելություն կազմակերպելու և մեր ավարտական վկայականները մեզ անձամբ հանձնելու համար»,-նշել է Ն. Գարաքյանը:

Միջոցառմանը ներկա էին ԱՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանը, ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, պրոռեկտորները, ֆակուլտետների դեկանները, պաշտոնատար այլ անձինք:



# ԱրՊՀ-ՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՄԱԳԻՍՏՐՈՍՆԵՐԻ ԴԻՊԼՈՄՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ



***Հունիսի 26-ին Արցախի պետական համալսարանում տեղի է ունեցել 2018-2019 ուստարում մագիստրատուրան գերազանցությամբ ավարտած շրջանավարտների դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունը:***

2018-2019 ուստարում ԱրՊՀ մագիստրոսի կոչում է ստացել 145 շրջանավարտ, որից 42-ը գերազանցության դիպլոմակիր է:

Ողջունելով ներկաներին և շնորհավորելով շրջանավարտներին մագիստրոսի կոչման արժանանալու առթիվ՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը խոսել է այն խնդիրների մասին, որոնք առկա են ուսումնառության գործընթացում և միաժամանակ վստահություն հայտնել, որ մեկ-երկու տարի հետո ԱրՊՀ-ն ունենալու է միջազգային չափանիշներին համապատասխան շենքային պայմաններ, ինչն էլ նպաստելու է ոչ միայն բակալավրիատի, այլև մագիստրատուրայի զարգացմանը: Ռեկտորի խոսքով՝ այդ զարգացմանը մեծապես նպաստելու է նաև բուհի հավատարմագրման գործընթացը:

«Ի տարբերություն ձեր ավագ սերունդների՝ դուք այն սերունդն եք, որին բախտ է վիճակվել ուսում ստանալ համեմատաբար խաղաղ պայմաններում: Բայց հաղթանակ տանելուց ոչ պակաս կարևոր է նաև այդ հաղթանակները պահելը: Այս առումով ձեր սերնդի վրա պատասխանատվություն է դրված, և ձեր մասնագիտական պատրաստվածությամբ դուք պետք է դառնաք ապագայի ամուր հիմքը»,-դիմելով շրջանավարտներին՝ մասնավորապես նշել է ռեկտոր Ա. Սարգսյանը՝ մաղթելով նրանց հաջողություններ հետագա գործունեության ընթացքում:

Շրջանավարտներին շնորհավորել և բարեմաղթանքի խոսք են հղել նաև ԱրՊՀ պրոռեկտորները, ֆակուլտետների դեկանները:

«Մեր երկրի ներկան և ապագան մեր երիտասարդությունն է: Մենք ունենք հրաշալի երիտասարդություն: Համարձակորեն քայլե՛ք առաջ, խիզախե՛ք, մի՛ մտածեք, որ ձեր ժամանակը դեռ հետո կգա, այդ ժամանակը վաղուց արդեն եկել է, գնահատե՛ք ձեր ուժերը և հասե՛ք բաղձալի բարձունքին»-ուսանողներին ուղղված շնորհավորանքի խոսքում ասել է ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանը:

Բուհը գերազանցությամբ ավարտած մագիստրոսները դիպլոմներն ու խորհրդանշական նվերները ստացել են բուհի ռեկտորի և պրոռեկտորների ձեռքից, ինչը, մագիստրոսների խոսքով, պարտավորեցնող է և ոգևորող:

«Որակյալ կրթությունը հայ ժողովրդի ապագայի հուսալի անկյունաքարն է: Մտավոր ներուժն է խոսում պետության հզորության մասին:Այս տարիների ուսումնառությունից հետո մեզ համար առավել պատասխանատու շրջան է սկսվում: Արցախի հանդեպ ունենք մասնագիտական և քաղաքացիական պատասխանատվություն, և մենք պատրաստ ենք ապագայի հուսալի հիմնաքարը լինելու»,-ասել է բնագիտական ֆակուլտետի «Աշխարհագրություն» մասնագիտացմամբ մագիստրատուրայի շրջանավարտ Արթուր Աբրահամյանը՝ ուսանողության անունից շնորհակալություն հայտնելով համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին արդյունավետ և որակյալ կրթության համար:

Շնորհավորանքի և համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին ուղղված երախտագիտության խոսք են ասել նաև մյուս ֆակուլտետների մագիստրատուրայի շրջանավարտներ:





# ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ. ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



***ԱրՊՀ հոգեբանական կենտրոնում հյուրընկալվել է պրակտիկ հոգեբան Անի Աբրահամյանը և ուսանողների, մագիստրանտների համար անցկացրել գործնական պարապմունք՝ «Հոգեբանական մանիպուլյացիա» թեմայով:***

Պարապմունքի ընթացքում քննարկվել է, թե ինչպես են մանիպուլյատորները ղեկավարում իրենց զոհերին, ներկայացվել դրդապատճառները, մանիպուլյացիային հակազդելու մեխանիզմները:





Ա. Աբրահամյանը նշել է, որ այսօր ցանկացած պահի մենք բոլորս ենթարկվում ենք ամենատարբեր մանիպուլյացիաների՝ մասնավորապես նշելով հեռուստատեսային, ինտերնետային գովազդները, անոնսները, գովազդային վահանակները, տպագիր մամուլը և այլն:

ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր, հ.գ.թ. Վիտյա Յարամիշյանը շնորհակալություն է հայտնել արդյունավետ միջոցառման համար՝ հույս հայտնելով, որ համագործակցությունը շարունակական կլինի:

Հանդիպման ընթացքում ամփոփվել են նաև «Շող» ցերեկային համայնքահեն կենտրոնի հոգեբանամանկավարժական տարաբնույթ խնդիրներ ունեցող երեխաներին ուսումնական տարվա ընթացքում աջակցություն ցուցաբերած ԱրՊՀ ուսանողների աշխատանքները:

«Շող» ցերեկային համայնքահեն կենտրոնի համակարգող Դ. Գալստյանը ռեկտորին ուղղված շնորհակալական նամակում բարձր է գնահատել ԱրՊՀ-ի կատարած աշխատանքը, որտեղ մասնավորապես նշել է, որ ուսանողների և համալսարանի հոգեբանական կենտրոնի անձնվեր աշխատանքի շնորհիվ իրենց կենտրոնի սաների մոտ արձանագրվել է զարգացման դրական դինամիկա: Նա նաև հույս է հայտնել, որ համագործակցությունը շարունակական կլինի և կնպաստի ծանր իրավիճակում հայտնված դժվար դաստիարակվող երեխաներին համակողմանի կրթություն ստանալու, իրենց ներուժը բացահայտելու, առողջ արժեհամակարգ ունենալուն և հայրենիքի համար բարիք գործող անհատներ դառնալու:

Մի շարք ուսանողներ հասարակական հիմունքներով կենտրոնին աջակցելու համար խրախուսվել են կամավորական աշխատանք իրականացնելը հավաստող տեղեկանքներով:

# ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔՈՒՄ

*Արցախի պետական համալսարանը կարևորում է հանրապետությունում կամավորական աշխատանքներին բուհի ուսանողների ներգրավվածությունը:*




Անցնող ուսումնական տարում ԱրՊՀ ուսանողները՝ որպես կամավորներ, ակտիվ մասնակցել են հանրապետությունում կարևոր նշանակություն ունեցող միջոցառումներին՝ նպաստելով աշխատանքների պատշաճ կազմակերպմանը:

ԱրՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի բաժնի աշխատակից Վահե Գալոյանը նշում է, որ ուսանողները սիրով և պատրաստակամությամբ են կամավորագրվում նմանատիպ աշխատանքներին՝ կատարելով տարաբնույթ այնպիսի աշխատանքներ, ինչպիսիք են, օրինակ, թարգմանչի, օտարերկրյա հյուրերի ուղեկցորդի, սոցիալական տարբեր ոլորտներում աջակցի գործառույթները:

Անցնող ուսումնական տարում ԱրՊՀ ուսանողները կամավորական աշխատանքներ են իրականացրել Ստեփանակերտի Քերոլայն Քոքսի անվան վերականգնողական կենտրոնում, Շուշիի «Շող» կենտրոնում:

Հունիսի 1-ից 9-ը Արցախում կայացած ConiFA-2019 (Անկախ ֆուտբոլային ասոցիացիաների կոնֆեդերացիա) Եվրոպայի առաջնությանը Արցախի պետական համալսարանից տասնյակ ուսանողներ կամավորական աշխատանքներ են իրականացրել՝ նպաստելով տարբեր ուղղություններով աշխատանքների կազմակերպմանը:

Հունիսի 29-ից 30-ը Starkey Hearing Foundation-ը Ստեփանակերտում առողջապահական ծառայություններ է մատուցել լսողության խնդիր ունեցող անձանց, որի աշխատանքներին ևս կամավորական հիմունքով ներգրավվել է ԱրՊՀ մոտ 40 ուսանող:

«Այս կամավորական աշխատանքները կարևոր են այնքանով, որ մենք կարողացանք մասնակցել բժիշկների աշխատանքներին՝ թարգմանելով, դիմողների տվյալները գրանցելով, որոշներին խորհուրդներ տալով: Օգնելով լսողության խնդիրներ ունեցող մարդկանց և տեսնելով նրանց ժպիտը՝ մեծ ոգևորություն ապրեցինք: Կամավորների շարքերում չկար այնպիսի մեկը, որ օրվա վերջում չժպտար ու գոհունակություն չզգար այն փաստից, որ մեր աշխատանքը արդյունավետ էր և հանրօգուտ»,- նշել է ԱրՊՀ ուսանողուհի Հռիփսիմե Խաչատրյանը՝ հավելելով, որ ամեն անգամ կամավորական աշխատանքի մասնակցելով՝ մեծ բավականություն են ստանում ուսանողները, քանի որ դրանով նպաստում են հանրությանը, այն ոլորտներին, որտեղ զգացվում է իրենց ներուժի կարիքը:

«Այս պահին աշխատում ենք Արցախում կայանալիք 7-րդ ամառային Համահայկական խաղերին կամավորներ ներգրավելու ուղղությամբ: Հուլիսի 8-ից մեկնարկում են համահայկական խաղերի բացման հանդիսավոր արարողության նախապատրաստական աշխատանքները, որտեղ դարձյալ անհրաժեշտ կլինի ուսանողության ներուժը»,-ասում է Վահե Գալոյանը և հավելում, որ արդեն բավական թվով ուսանողներ կամավորագրվել են: Կամավորագրվելու համար ուսանողները կարող են դիմել ՈՒՀՏՍԱ և կարիերայի բաժին կամ զանգահարել 047 94 91 50, 097 57 76 60 հեռախոսահամարներով:

# ԿԱՅԱՑԵԼ Է «ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

***Հուլիսի 6-ին ԱրՊՀ հոգեբանական կենտրոն է այցելել ՀՀ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի դասախոս, հ.գ.թ., դոցենտ Լևոն Սարգսյանը և վարել «Հոգեբանական խորհրդատվության հիմունքները» թեմայով գործնական պարապմունք:***

Պարապմունքի ընթացքում բանախոսն անդրադարձել է հոգեբանական խորհրդատվության առանձնահատկություններին, հիմունքներին, թե ինչպիսի անձնային որակներ պետք է ունենա հոգեբանը, խոսել հիմնական խնդիրների և դրանց վերացման եղանակների մասին:

Հոգեբանի անձնային որակներից Լ. Սարգսյանն առանձնացրել է ուրիշների կողմից որպես հուսալի, վստահելի մարդ ընկալվելու, ուրիշների նկատմամբ դրական զգացմունքներ՝ սեր, հարգանք, հետաքրքրվածություն, համակրանք ունենալու, սեփական զգացմունքները հարգելու և դրանք կառավարել կարողանալու, ուրիշների դեպրեսիվ վիճակը հոգեբանին չընկճելու անհրաժեշտությունը:

Հանդիպմանը բանախոսը պատասխանել է նաև ներկաների հարցերին, կատարվել են պրակտիկ վարժություններ:

Կարևորելով պարապմունքի նշանակությունն ու շնորհակալություն հայտնելով բանախոսին՝ ԱրՊՀ պրոռեկտոր, հ.գ.թ., դոցենտ Վիտյա Յարամիշյանը հավաստիացրել է, որ նման միջոցառումները հոգեբանական կենտրոնում շարունակական են լինելու:



# ԱրՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է «ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏ ՇՆՈՐՀՈՒՄ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԵՌՕՐՅԱ ՀԱՄԱԺՈՂՈՎ

*ՀՀ մասնագիտական կրթության ՈԱԱԿ 10-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում հունիսի 20-ին ՈԱԱԿ նախաձեռնությամբ ԱրՊՀ-ում մեկնարկել է «Որակավորումների արժանահավատ շնորհում և հավատարմագրում» թեմայով եռօրյա համաժողով: Համաժողովին մասնակցում էին ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը, ՀՀ մասնագիտական կրթության ՈԱԱԿ պատվիրակությունը՝ տնօրեն Ռուբեն Թոփչյանի գլխավորությամբ, Արցախի բուհերից ներկայացուցիչներ:*



ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ողջույնի խոսքում շնորհավորել է ՈԱԱԿ 10-ամյակի առթիվ՝ կարևորելով կենտրոնի հետ համագործակցության ընթացքում ունեցած բուհի ձեռքբերումները, որոնք ուղղորդող դեր ունեցան հավատարմագրման գործընթացին ճիշտ նախապատրաստվելու համար:

«ԱրՊՀ-ն հռչակել է իրեն որպես սովորող կազմակերպություն, և սա նշանակում է, որ մենք աշխարհին ոչ թե փորձում ենք համոզել, թե ուզում ենք ինչ-որ բան փոխել կրթական համակարգում, այլ պարզապես հիմնավորել մեր համեստ դերը տարածաշրջանում»,-նշել է ռեկտորը:

ԱՀ ԿԳՍ նախարար Ն. Աղաբալյանը, ողջունելով համաժողովի մասնակիցներին և շնորհավորելով ՈԱԱԿ-ին՝ 10-ամյակի կապակցությամբ, նախարարության անունից պատվոգրով և նվերով պարգևատրել է ՈԱԱԿ-ին՝ ի դեմս տնօրեն Ռ. Թոփչյանի՝ ԱՀ-ում մասնագիտական կրթության որակի ապահովման գործում ունեցած ավանդի և Արցախի հետ շահագրգիռ համագործակցության համար:

Կարևորելով բուհերի հավատարմագրման գործընթացը՝ նախարարը վստահություն է հայտնել, որ ՈԱԱԿ-ի հետ Արցախի բուհերի համագործակցությունը արդյունավետ է լինելու:

ՀՀ մասնագիտական կրթության ՈԱԱԿ տնօրեն Ռուբեն Թոփչյանը, խոսելով կրթական համակարգում ընթացող բարեփոխումների մասին, նշել է, որ պետք է բարեփոխումների ճանապարհը միասին անցնել, իսկ միասինը ավելի մեծ պատասխանատվություն է ենթադրում: Խոսելով համաժողովի նպատակներից՝ Ռ. Թոփչյանն առանձնացրել է այն հանգամանքը, որ ցանկացած բուհ իր ներսում պետք է ունենա մի մեխանիզմ, որը կզբաղվի ունեցած արդյունքների շարունակական բարելավմամբ, ինչի վերջնարդյունքներից պետք է լինի գործատուների գոհունակությունը բուհի թողարկած շրջանավարտների մասնագիտական որակներից: Նրա խոսքով՝ այս մեխանիզմն է ներդրվում հիմա Արցախի բուհերում:

«Այն խնդիրները, որոնք առկա են Արցախի բուհերում, նկատելի են գիտական գրեթե բոլոր միջավայրերում: Եվ եթե մի փոքր լուծում եք գտել այդ խնդիրների համար, հավատացեք, որ հաստատ այն կարժանանա հետաքրքրության, և Արցախը կդառնա հետաքրքրության կենտրոն»,-ասել է ՀՀ ՈԱԱԿ-ի պատասխանատուն:

Հունիսի 21-ին և 22-ին շահակիցների հետ տեղի են ունեցել քննարկումներ՝ իրականացվող բարեփոխումների, մարտահրավերների, հաղթահարման ուղիների, հաղորդակցման, որակի մեխանիզմների կառուցման և կիրառման վերաբերյալ: Առանձին քննարկումներ են կազմակերպվել նաև ինքնավերլուծություն իրականացնող խմբերի հետ, կատարվել գործնական աշխատանքներ և փորձնական արտաքին գնահատում, որին դիտորդի դերում ներկա էր նաև ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) փորձագիտական խումբը:



# «ԲՈՒՀ-ԳՈՐԾԱՏՈՒ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ» ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

*Հունիսի 7-ին ԱրՊՀ-ում կայացել է ԱՀ Ազգային վիճակագրության ծառայության և Արցախի պետական համալսարանի համատեղությամբ իրականացված «Բուհ-գործատու հետազոտության» արդյունքների շնորհանդեսը, որին ներկա էին ԱՀ ԱՎԾ և ԱրՊՀ պատասխանատուներ, ուսանողներ:*



Ողջունելով ներկաներին՝ ԱՀ ԱՎԾ նախագահ Մանուշ Մինասյանը կարևորել է կրթական համակարգում իրականացրած ընտրանքային հետազոտության նշանակությունը և նշել, որ հետազոտությանը ներգրավվել են նաև ՀՀ համապատասխան մասնագետների ներուժը, ինչպես նաև ԱՀ ԿԳՍ նախարարության կողմից հարցաթերթիկները նախապես ենթարկվել են արտաքին կարծիքի:

Խոսելով հետազոտության նպատակներից՝ ԱՎԾ նախագահ Մանուշ Մինասյանը նշել է, որ դրանով փորձել են վեր հանել կրթական համակարգում առկա խնդիրները: Նրա խոսքով՝ ավելի քան 30 տարի է՝ Արցախի Հանրապետությունում ընթանում են բարեփոխումներ բոլոր ոլորտներում, որից անմասն չէ նաև կրթական համակարգը: ԱՎԾ պատասխանատուն, անհրաժեշտ համարելով հետազոտությունը, ընդգծել է, որ այս 30 տարիների ընթացքում իրականացված աշխատանքներին պետք է որոշակի գնահատական տրվի, վերլուծության ենթարկվի:

Գործատուների հարցման արդյունքները, որին փորձուսուցման շրջանակում մասնակցել են նաև ֆինանսներ 4-րդ կուրսի ուսանողները, ներկայացրել է տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Ռուզաննա Մանգասարյանը: Նրա խոսքով՝ այս հետազոտությունը կարևոր է համալսարանի համար, հատկապես երբ բուհը կանգնած է հավատարմագրման նախաշեմին:

«Համալսարանի կարևոր առաքելությունը հենց այն է, որ աշխատաշուկա-բուհ համագործակցության շրջանակում կարողանա պատրաստել այնպիսի մասնագետներ, որոնք կբավարարեն աշխատաշուկայի պահանջարկին: Հարցման արդյունքները վկայում են, որ գործատուները ընդհանուր առմամբ գոհ են մեր շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության մակարդակից»,-ասել է Ռ.Մանգասարյանը և հավելել, որ հարցմանը մասնակցել է 372 գործատու, որոնց մոտ ընդգրկված է ԱրՊՀ 848 շրջանավարտ:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, շնորհակալություն հայտնելով հետազոտությունն իրականացնող կառույցներին ու մասնակիցներին, կարևորել է հետազոտության նշանակությունը և նշել, որ բուհ-գործատու ծրագիրն Արցախի Հանրապետությունում իրականացվում է առաջին անգամ:

«Ծրագիրն առանձնակի նշանակություն ունի հատկապես ԱրՊՀ-ի համար, որովհետև այս ուղղությունը բուհի ամենամեծ բացերից մեկն էր: ԱՀ ԱՎԾ աշխատակիցների, ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների միջոցով բարեհաջող իրականացվել է մի ծրագիր, որը լրացնում է այդ բացը: Այն օգտակար կլինի նաև ինչպես ԱՀ ԿԳՍ նախարարության, ԱՎԾ-ի, ԱրՊՀ-ի, այնպես էլ այլ կառույցների համար»,-ասել է ռեկտորը՝ ծրագրի իրականացման անհրաժեշտությունը շեշտելով նաև հավատարմագրման տեսանկյունից:





# ԿԱՅԱՑԵԼ Է «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԵՐԿՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑ

*Հունիսի 17-ին ԱրՊՀ-ում մեկնարկել էին «Հասարակական ներգրավվածության ներուժի ձևավորում Լեռնային Ղարաբաղում» ծրագրի երկօրյա դասընթացներ՝ նախատեսված ԱրՊՀ դասախոսների և ուսանողների համար:*



Դասընթացներն իրականացնում էր Կովկասի ինստիտուտը՝ համագործակցելով «Արմավիրի զարգացման կենտրոնի», «Քաղաքացիական հասարակության ինստիտուտի» և «ԻՆԹՐԱ» հոգեկան առողջության կենտրոնի հետ, Միացյալ Թագավորության կառավարության՝ «Հակամարտությունների, կայունության և անվտանգության» հիմնադրամի աջակցությամբ:



Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը կարևորել է դասընթացի նշանակությունը՝ նշելով, որ Կովկասի ինստիտուտը բազմաթիվ ծրագրեր է իրականացրել՝ մշտապես իր ուշադրության կենտրոնում պահելով Արցախի պետական համալսարանը:

Խոսելով ծրագրի ընդհանուր նպատակից՝ «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ գործադիր տնօրեն Նաիրա Առաքելյանը նշել է, որ հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացում մեծ է կնոջ դերը, և ծրագիրն ընդհանուր առմամբ վերաբերում է հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացներում կանանց հատուկ դերին, կարիքներին:

Բանախոսությամբ հանդես է եկել «Արմավիրի զարգացման կենտրոնի» ՀԿ փորձագետ Անի Թովմասյանը, ով ներկայացրել է ՄԱԿ ԱԽ 1325 բանաձևը, որը վերաբերում է հակամարտությունների կարգավորման գործընթացում կանանց ներգրավվածությանը:

Դասընթացի ընթացքում բանախոսությանը զուգահեռ ծավալվել է ինտերակտիվ քննարկում՝ յուրաքանչյուր մասնակցի հնարավորություն ընձեռելով ներկայացնելու իր տեսակետը՝ հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում կանանց ներգրավվածության հարցի վերաբերյալ:



«Կազմակերպությունն աշխատում է Հայաստանի ողջ տարածքում, այժմ արդեն աշխատելու ենք նաև Արցախում: Երկօրյա դասընթացին կմասնակցեն ինչպես ուսանողներ, այնպես էլ դասախոսներ: Բացի դրանից, Մարտակերտ, Ասկերան քաղաքներում, ինչպես նաև Գիշի, Տող համայնքներում կիրականացնենք կանանց կարիքի գնահատման գործընթաց»,- նշել է Ն. Առաքելյանը:

Դասընթացը պահանջված և արդյունավետ են գնահատել մասնակիցները՝ ցանկություն հայտնելով, որ այն շարունական լինի:

# ԱրՊՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՀԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԻԱՅՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ






*Հունիսի 11-ից 14-ը Հարավային Օսիայի մայրաքաղաք Ցխինվալում տեղի է ունեցել ռուս-օսիական երիտասարդական համաժողով, որին մասնակցել են արցախցի մի խումբ երիտասարդներ, այդ թվում նաև ԱրՊՀ «Պատմություն և իրավագիտություն» ֆակուլտետի «Քրեական իրավունք և դատավարություն» մասնագիտացմամբ մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողուհի Լուիզա Ներսեսյանը:*

Արցախից մեկնած պատվիրակությունը ղեկավարում էր ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության փոխնախարար Գայանե Գրիգորյանը: Համաժողովին մասնակցել է Ռուսաստանի Դաշնությունից, Դոնեցկի և Լուգանսկի ժողովրդական հանրապետություններից, Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետությունից, Աբխազիայից, ինչպես նաև Հյուսիսային և Հարավային Օսիայից շուրջ 100 երիտասարդ:

Լուիզա Ներսեսյանի խոսքով՝ մասնակիցները արդյունավետ օրեր են անցկացրել համաժողովի շրջանակում: Համաժողովի պաշտոնական բացումը տեղի է ունեցել Ցխինվալի պետական-դրամատիկական թատրոնի շենքում: Նույն օրը տեղի է ունեցել նաև Արցախում հունիսի 1-ից 9-նն անցկացված ConiFA-2019-ի չեմպիոնի տիտղոսը նվաճած Հարավային Օսիայի ֆուտբոլային թիմի դիմավորման և պարգևատրման արարողությունը: Համաժողովի մասնակիցները եղել են Հր. Օսիայի Ազգային թանգարանում, այցելել Ջագինա գյուղի ամրոցային համալիր, հանդիպումներ ունեցել Հարավային Օսիայի Հանրապետության նախագահ Անատոլի Բիբիլովի, արտաքին գործերի նախարար Դմիտրի Մեդոևի, մշակույթի նախարար Ժաննա Զասիևայի և այլ պաշտոնատար անձանց հետ:

«Համաժողովի ընթացքում մենք ծանոթացանք Հր. Օսիայի ժողովրդի պատմությանը, նրանց մշակույթին՝ ազգային ծիսակատարություններին և հետաքրքիր սովորույթներին, մասնակցեցինք հետաքրքիր սեմինարների ու քննարկումների: Միջոցառումը հասել է իր գլխավոր նպատակին՝ ներկա պատվիրակությունների մասնակիցների միջև կապի հաստատում և երիտասարդական քաղաքականության համատեղ իրականացման ծրագրերի մշակում: Շատ տպավորված եմ Ալանիայի ժողովրդի ջերմ ընդունելությունից և մեր հանդեպ ցուցաբերած առանձնահատուկ ուշադրությունից»,-ասել է Լ. Ներսեսյանը՝ կարևորելով նմանատիպ միջոցառումներին մասնակցելու անհրաժեշտությունը:

# «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԱրՊՀ-ՈՒՄ




*Հունիսի 25-ին Արցախի պետական համալսարան են այցելել Կովկասի ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Իսկանդարյանն ու նույն ինստիտուտի գիտաշխատող Գոռ Պետրոսյանը և հանդես եկել դասախոսությամբ:*

Ողջունելով հյուրերին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը կարևորել է Կովկասի ինստիտուտի դերը ԱրՊՀ-ում և շնորհակալություն հայտնել նրանց համագործակցության համար:

«Կովկասի ինստիտուտի գործունեությունը բոլորիս քաջ ծանոթ է, և հարկ է շեշտել նրա կարևոր դերը ԱրՊՀ-ում: Մեր համագործակցությունը տարիների պատմություն ունի արդեն, և յուրաքանչյուր տարի Կովկասի ինստիտուտը ԱրՊՀ-ում հանդես է գալիս նոր ծրագրերով»,- ասել է ռեկտորը:

Կովկասի ինստիտուտի գիտաշխատող Գոռ Պետրոսյանը հանդես է եկել «Ժողովրդավարության ծագումը և վերափոխումները» թեմայով դասախոսությամբ, որին ներկա էին ԱրՊՀ դասախոսներ և ուսանողներ: Բանախոսը, ներկայացնելով ժողովրդավարության ծագումը, պատմական հիմքերը, ծագման անհրաժեշտությունը, պատմական զարգացման փուլերն ու փոխակերպումները, մանրամասն անդրադարձել է ժողովրդավարության պոլիսային, հանրապետական տեսակներին և ազգային պետության մեջ ժողովրդավարության գործածությանը:

«Ժողովրդավարության թեման այսօր հետաքրքրում է ամբողջ աշխարհի հասարակությանը, հատկապես երիտասարդությանը, ուստի անհրաժեշտ է, որ ուսանողները բազային գիտելիքներ ունենան ժողովրդավարության մասին, որպեսզի նրանք իմանան, թե ինչ սկզբունքներ ունի ժողովրդավարությունը և ինչ վերափոխումների է ենթարկվել»,- թեմայի արդիականությունն այսպես է հիմնավորել Գ. Պետրոսյանը:



# Գ Ի Տ Խ Ո Ր Հ Ր Դ Ի Ն Ի Ս Տ



*Հունիսի 7-ին կայացած ԱրՊՀ գիտխորհրդի նիստում քննարկվել են համալսարանի ներքին կյանքին վերաբերող մի շարք հարցեր:*

Օրակարգային առաջին հարցը վերաբերում էր 2019-2020 ուսումնական տարվա ընդունելության փաստաթղթերի ընդունման արդյունքներին, որի վերաբերյալ տեղեկատվությամբ հանդես եկավ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը: Բոլոր մասնագիտությունների գծով ռեկտորը ներկայացրեց դիմորդների քանակը՝ ընդգծելով, որ արդյունքները գերազանցել են սպասումները:

2018-2019 թթ. ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին ելույթով հանդես եկավ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը, ով ըստ մասնագիտությունների մանրամասնեց ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունները՝ հորդորելով դեկաններին և ամբիոնի վարիչներին հետևողական լինել վերջիններիս կարծիքների և առաջարկությունների նկատմամբ:

Որակի ապահովման կենտրոնի վարիչ Հասմիկ Մինասյանը ներկայացրեց ԱրՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ընթացիկ և նախատեսվող աշխատանքները՝ նշելով, որ հավատարմագրման նախապատրաստական աշխատանքներն ընթանում են ըստ սահմանված ժամանակացույցի:

Հեռակա ուսուցման համակարգի 2018-2019 ուսումնական տարվա II կիսամյակի դասընթացների ընթացքի մասին տեղեկատվությամբ հանդես են եկել ֆակուլտետների դեկանները՝ առանձնացնելով հաճախումների մակարդակը:

Այլ հարցերում գիտխորհուրդը քննարկել է մեթոդական մեկ ձեռնարկի հրատարակության, դոցենտի գիտական կոչում շնորհելու և այն ՀՀ ԲՈԿ-ի վավերացմանը ներկայացնելու, պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների մրցույթի մասին հարցերը:

* * *

*Հունիսի 28-ին կայացել է ԱրՊՀ գիտական խորհրդի նիստ, որտեղ քննարկվել և հաստատվել են մի շարք փաստաթղթեր, տպագրության երաշխավորվել ուսումնամեթոդական ձեռնարկ:*

Օրակարգի հաստատումից հետո ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանն ամփոփ տեղեկություն է ներկայացրել հավատարմագրման գործընթացի մասին, մասնավորապես՝ հունիսի 20-ից 22-ը ԱրՊՀ-ում «Որակավորումների արժանահավատ շնորհում և հավատարմագրում» թեմայով կազմակերպված համաժողովի արդյունքները, որի ընթացքում ՀՀ մասնագիտական կրթության ՈԱԱԿ փորձագետների մասնակցությամբ անց է կացվել փորձնական արտաքին գնահատում: Ռեկտորը խոսել է համաժողովի շրջանակում ինքնավերլուծություն իրականացրած աշխատանքային խմբերի մասնակցությամբ կայացած աշխատաժողովների ընթացքում վեր հանված խնդիրներից և համապատասխան հանձնարարականներ տվել պատասխանատուներին:

«Թեպետ առաջին անգամ ենք սկսում հավատարմագրման գործընթացը, բայց բավական առաջընթաց ունենք արձանագրված, ինչը փաստել են նաև փորձագետները: Սա բոլորիս համատեղ աշխատանքի արդյունքն է: Կատարվածը քիչ չէ, սակայն առկա խնդիրները խոսում են այն մասին, որ անելիքներ դեռ կան»,-ասել է ռեկտորը՝ հավելելով, որ առկա թերությունների մեծ մասը պայմանավորված է օբյեկտիվ պատճառներով, որոնցից մեկն էլ այն է, որ առաջին անգամ են դիմում հավատարմագրման:

Օրակարգի հաջորդ հարցերով քննարկվել, ապա հաստատվել են բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման համակարգերի, մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգերի նոր ուսումնական պլանները, ԱրՊՀ ՊՈԱԿ բակալավրիատի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը /կրթական ծրագրի ձևաչափը լրացնելու մեթոդական ցուցումներ/:

*Գիտխորհուրդը նաև տպագրության է երաշխավորել մեկ ուսումնամեթոդական ձեռնարկ, կողմ քվեարկել ԱրՊՀ դասախոս Ս. Ստեփանյանին դոցենտի կոչում շնորհելու և այն ԲՈԿ-ի վավերացմանը ներկայացնելու հարցին:*

# «ՆՈՐԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ»-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՑԱՆՑ ԿՈՆՖԵՐԱՆՍ

*Հունիսի 4-ին ԱրՊՀ-ն մասնակցել է «Նորանկախ պետությունների համալսարանների ասոցիացիա»-ի կողմից կազմակերպված միջազգային առցանց կոնֆերանսին, որի աշխատանքները համակարգում էր ասոցիացիայի նախագահ Ստեփան Իորդանի Բերիլը: Կոնֆերանսին մասնակցում էին ասոցիացիայի անդամ երկրների՝ Աբխազիայի Հանրապետության, Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետության, Հարավային Օսիայի Հանրապետության և Արցախի Հանրապետության պետական համալսարանները:*



Ողջունելով կոնֆերանսի մասնակիցներին՝ Ս. Բերիլը կարևորել է կրթական ոլորտում նման ծավալով գործակցելու և ոլորտում առկա խնդիրների, կատարված աշխատանքների, անելիքների, խնդիրների լուծման ուղիների մասին խոսելու, կարծիքներ փոխանակելու անհրաժեշտությունը:

Մասնակից համալսարանների բանախոսները կոնֆերանսի ընթացքում ներկայացրել են իրենց բուհերի գործունեությունը, ուսումնագիտական ոլորտում կատարվող աշխատանքները, միջազգային համագործակցությունը, ուսանողության հետ տարվող աշխատանքներն ու առանցքային նշանակության ծրագրերն ու միջոցառումները:

Կոնֆերանսին հնչել է նաև ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանի ուղերձը: Ողջունելով կոնֆերանսի մասնակիցներին՝ ուղերձում ռեկտորը մասնավորապես նշել է բուհի հիմնական գործունեությունը, կառուցվածքը, ներկայումս իրականացվող աշխատանքները, կրթության, գիտության, միջբուհական համագործակցության և այլ ուղղություններով իրականացված աշխատանքներն ու ձեռքբերումները:

«12 տարի է անցել «Նորանկախ պետությունների համալսարանների ասոցիացիա»-ի ստեղծման պահից, ինչը հաստատել է, որ ճիշտ ուղի է ընտրվել: Մեր համալսարանները միավորված են մեկ ընդհանուր ռազմավարական նպատակի շուրջ, այն է՝ կրթության և գիտության զարգացումը, առանց որի անհնար է մեր ժողովուրդների արժանապատիվ ապագայի կառուցումը»,-նշել է նա՝ հավելելով, որ ԱրՊՀ-ն կանի ամեն հնարավորը՝ ասոցիացիայի անդամ երկրների համալսարանների հետ համագործակցության պահպանման և հետագա զարգացման համար:

ԱրՊՀ գիտության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը, կարևորելով ասոցիացիայի անդամ երկրների հետ միջբուհական համագործակցությունն ու դրա արդյունավետությունը, նշել է, որ այս օնլայն կոնֆերանսը թվով 3-րդն է, և այն հանդիսանում է փորձի փոխանակման լավագույն հարթակներից:




«Բարձր եմ գնահատում այս համագործակցությունը, որը կարևոր է հատկապես միջազգային համագործակցության տեսանկյունից: Արցախի պետական համալսարանը միջազգային համագործակցության ասպարեզում խոչընդոտների է հանդիպում, որը կապված է մեր երկրի քաղաքական կարգավիճակի հետ: Այս առումով «Նորանկախ պետությունների համալսարանների ասոցիացիա»-ն կարևոր հարթակ է, որի շրջանակում բուհերի համագործակցության արդյունքները գոհացուցիչ են»,-նշել է Վ. Ավանեսյանը:



# ԱրՊՀ-Ն ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՑԱՆՑ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ



*ԱրՊՀ-ն մասնակցել է «Նորանկախ պետությունների համալսարանների ասոցիացիա»-ի նախաձեռնությամբ կազմակերպված «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները արդի շրջանում» խորագրով միջազգային առցանց գիտաժողովին:*

Օրերս «Նորանկախ պետությունների համալսարանների ասոցիացիա»-ի կողմից կազմակերպված միջազգային առցանց կոնֆերանսի ժամանակ պայմանավորվածություն էր ձեռք բերվել ասոցիացիայի անդամ երկրների համալսարանների միջև կազմակերպել միջազգային առցանց գիտաժողով: Համաձայն պայմանավորվածության՝ հունիսի 13-ին կայացել է գիտաժողով, որին մասնակցել են նաև Արցախի պետական համալսարանի ներկայացուցիչները:

ԱրՊՀ ռեկտորի անունից գիտաժողովի մասնակիցներին ողջունել է ԱրՊՀ գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանը՝ առաջարկելով պարբերական դարձնել նման առցանց գիտաժողովների կազմակերպումը:

Գիտաժողովին մասնակցել և գիտական զեկուցումներով հանդես են եկել ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանը, տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Իրինա Իշխանյանը՝ «Ներդրումների արդյունավետության բարձրացումը՝ որպես տնտեսական առաջընթացն ապահովող կարևորագույն գործոն», «Ներդրումների ճյուղային կառուցվածքի վերլուծությունն ու դրա բարելավման հնարավորությունները Արցախի Հանրապետությունում» թեմաներով:

Կարևորելով նման գիտաժողովներին մասնակցության նշանակությունն ու անհրաժեշտությունը՝ Ռ. Մանգասարյանը գոհունակություն է հայտնել գիտաժողովի արդյունավետությունից և նշել, որ այն հնարավորություն է ոչ միայն գիտական փաստեր, վերլուծություններ հիմնավորելու, այլ նաև համեմատության եզրեր տանելու տարբեր ուղղություններով՝ գիտական ներուժի, ուսումնասիրությունների մեթոդների, մեխանիզմների և այլն:

Գիտաժողովին ներկայացված էր 100 գիտական հոդված, որից միայն հինգն է ընտրվել պլենար նիստում զեկուցելու համար, այդ թվում նաև ԱրՊՀ ներկայացրած հոդվածը:

# ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ՝ «ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ

*ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել են գիտական ընթերցումներ՝ «Լրացուցիչ կրթական ծրագրերի անհրաժեշտությունը նախադպրոցական կրթական հաստատություններում» թեմայով:*




«Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները՝ ամբիոնի դասախոս Ռոզալյա Հարությունյանի ղեկավարությամբ, հանդես են եկել թեմայի վերաբերյալ զեկուցումներով: Ներկայացվել ու քննարկվել են լրացուցիչ կրթական ծրագրեր, որոնք կարող են հիմք ծառայել նախադպրոցական կրթական հաստատությունների գործունեության արդյունավետության բարձրացման համար: Միջոցառմանը ներկա էին մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ուսանողներն ու ամբիոնի դասախոսները:

Ուսանողները հանդես են եկել մեթոդական առաջարկություններով, ժողովրդական արվեստների, մասնավորապես՝ նախշազարդերի ուսուցման վերաբերյալ, կարևորել «Հուլզերի ծիածան» հեղինակային ծրագիրը՝ նախատեսված ավագ նախադպրոցական տարիքի երեխաների համար: Առանձնահատուկ հետաքրքրությամբ ուսանողներն արժևորել են «Արահետ դեպի իմ ես-ը» հեղինակային ծրագիրը:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Է. Բաղդասարյանը կարևորել է նման միջոցառումները՝ արժևորելով ստեղծագործական ունակությունների ձևավորումը ազգային արժեքների զարգացման համատեքստում:

Միջոցառման վերջում ամփոփիչ խոսքով հանդես է եկել ֆակուլտետի դեկան Շ.Այդինյանը՝ կարևորելով բուհ - նախադպրոցական կրթական հաստատություններ կապը: